ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

22 հուլիս 2022 թվական ք. Արթիկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022-2026թթ.. Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ հանրային քննարկման

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 15:00-ին:

Ներկա էին՝ Արթիկ համայնքի ղեկավար Անան Ոսկանյանը, Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի անդամները, Արթիկ համայնքի վարչական ղեկավարները, Արթիկ համայնքի ավագանու անդամները: Ներկաների թվում էին հասարակական կազմակերպություններ ներկայացնող անձիք, համայնքի տարբեր բնակավայրերից ժամանած քաղաքացիներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանը: Նա իր բացման խոսքում կարևորեց Արթիկ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի տեսլականը և հավելեց, որ ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել համայնքի կարողությունները՝ բնակչության կարիքները հոգալու համար: Նա նշեց, որ համայնքի համար տվյալ կարևորագույն փաստաթղթի նախագծի մշակման համար իր կողմից ստեղծվել էր աշխատանքային խումբ: Նախնական եղել են մի շարք քննարկումներ, որտեղ աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են կատարածը, արել առաջարկություններ և դիտողություններ, որոնք և ընդգրկվել են ծրագրի մեջ:

Ելույթ ունեցան. Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, նա համառոտ ներկայացրերց 2022-2026 թթ.. Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի հանրային քննարկման կազմակերպման, անցկացման, ամփոփման և համայնքի ավագանուն դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունների իրավական հենքը՝ այն է, Արթիկ համայնքի 08.02.2022 թվականի N 17-Ն որոշմամբ

հաստատված <<Արթիկ համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման >> կարգը: Նա ներկաներին ասաց, որ Արթիկ համայնքի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Արթիկ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ համայնքի ղեկավարը կազմում և մինչև համայնքի զարգացման ծրագրերի նախագծելը, համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային քննարկումներ: Հանրային քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

Հանրային քննարկման օրակարգում ընդգրկված ծրագրի նախագիծն ընդհանուր **գծերով ներկայացրեց** աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը և համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, նրանք ներկայացրեցին ծրագրի նախագծը ըստ բաժինների և ոլորտների՝ ֆինանսական հատկացումներով, ելակետային և կանխատեսվող ցուցանիշներով: Ա. Սուքիասյանը ասաց, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կազմման և կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցության ապահովման համար օրենքի պահանջ է հանրային քննարկումների անցկացումը: Նա ասաց, որ համայնքի բնակիչները, օրենքի պահանջին համապատասխան, իրազեկվել են, համայնքի բնակիչներին փոստային ծառայության միջոցով անհատապես ուղարկվել են հանրային քննարկման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող տեղեկատվական թերթիկներ, համայնքի բնակիչները մինչ հանրային քննարկումը և քննարկումից հետո դեռևս հնգօրյա ժամկետում կարող են իրենց առաջարկությունն ու դիտողությունները ներկայացնել համայնքապետարան, որոնց վերլուծության հիման վրա նախագծում կկատարվեն անհրաժեշտ լրամշակումներ:

Նա խնդրեց ներկաներին ակտիվ մասնակցել հանրային քննարկմանը և հանդես գալ առաջարկություններով:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հարցեր.

- Հառճ գյուղի վարչական ղեկավար Ռ. Նազարեթյանը ասաց, որ տարածաշրջանը սպորտի, մասնավորապես վոլեյբոլի, բասկետբոլի, ծանրամարտի ուժեղ թիմեր է ունեցել, նրանք հանդես են եկել հանրապետական առաջնություններում և գրանցել բարձր ցուցանիշներ, Հնգամյա ծրագրում սպորտի զարգացման համար որևէ բան գրված չէ:

Համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանն ասաց, որ ըստ ոլորտների՝ աղյուսակներում մասնավորեցված էն նաև սպորտի ոլորտի համար ծրագրերը և հատկացվելիք ֆինանսական միջոցները: Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանն ասաց, որ սպորտի ոլորտին 50 մլն. ՀՀ դրամ է նախատեսված, այս գումարի մեջ չի մտնում մարզական ՀՈԱԿ-ների աշխատողների համար տրվող աշխատավարձերը: Լավ մարզիչի կողքին տեղական իշխանությունները կանգնած են, խրախուսում և աջակցում են նրանց: Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանն ասաց, որ աղյուսակում նշված է նաև խաղահրապարակների կառուցում, որը մասսայական սպորտի զարգացման ձև է:

- Համայնքի ավագանու անդամ Լ. Հաջաթյանը հարցրեց, արդյոք անտառային տարածքների պահպանությանն ուղղված ռազմավարություն ունենք թե ոչ,
- և հանքարդյունաբերության ձեռնարկություններին ուղղված որևէ ռազմավարություն ունենք մշակված թե ոչ:

Պատասխանող Ա. Հարությունյանն ասաց, որ Արթիկ համայնքը հարուստ է իր տուֆ քարի հանքապաշարներով, հանքարդյունահանող ձեռնարկությունները որոշակիորեն ապահովում են բնակիչների զբաղվածությունը, բացի այդ, համայնք մուտք են գործում բեռնատար մեքենաներ, որոնք համայնքում որոշակիորեն բարձրացնում են ապրանքաշրջանառությունը: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, համայնքի տարածքում այս պահին ռեկուլտիվացվում է 40 հա սպառված պաշարներով տուֆի հանքերը: Իսկ գործող հանքերը օրենքով նախատեսված պետական վճարները կատարում են, որից հետո պետությունն է իրականացնելու ռեկուլտիվացիոն ծրագրերը:

Անտառների հետ կապված ծրագրերը ներկայացնելիս պետք է նշվի, որ մեծ մասը պետության պահպանության տակ են, համապատասխան ՊՈԱԿ-ների միջոցով ծրագրեր են իրականացվում, հսկողություն է սահմանվում:

Աշխատակազմի քարտուղար Ա. Սուքիասյանը նշեց, որ կանաչապատ տարածքների ընդլայնման և խնամքի ու պահպանության համար համայնքի բյուջեից 30 մլն. ՀՀ դրամ է հատկացված:

Համայնքի զարգացման ծրագրերի բաժնի պետ Մ. Մովսիսյանն ասաց, որ այս պահին Արթիկի տարածաշրջանում հիմնվում են անտառներ, այս պահին Լետնակերտում 40 հա տարածքի վրա հիմնվում է անտառ, ծառատունկի մի մասը գարնանն է կատարվել, մյուսը՝ աշնանն է մեկնարկելու, ակտիվ համագործակցում ենք ՀՀՇՄ ԲԾԻԳ-ի հետ, տարածքային կառույցների հետ, նաև ԷՅԹԻՓԻ բարեգործական կազմակերպության հետ, որն այժմ ուսումնասիրում է համայնքի այն տարածքները, որտեղ հնարավոր է անտառապատ տարածքներ ստեղծել:

- Համայնքի ավագանու անդամ Լ. Հաջաթյանը հարցրեց, արդյոք ՇՄԱԿ փորձաքննությամբ նախատեսված՝ բեռնատար մեքենաների հանքից դուրս գալուց լվացում իրականացվում է, և համայնքն ինչ է անում վերահսկողություն իրականացնելու համար:
- Նա դժգոհություն հայտնեց, որ գյուղմթերք վաճառելու համար նախատեսված տարածքից վաճառողները դուրս են գալիս և իրենց առևտուրը կազմակերպում մայթերի վրա՝ անհարմարություններ պատճառելով համայնքի բնակիչներին: Այս կապակցությամբ ինչ միջոցառումներ է նախատեսում Արթիկի համայնքապետարանը փողոցային առևտրի դադարեցման համար:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանն առաջին հարցի մասով ասաց, որ Արթիկի համայնքապետարանը պարբերաբար կհորդորի տնտեսվարողներին՝ հանքանյութով բարձված մեքենաները հանքերից դուրս գալուց անիվների լվացում կազմակերպելու և տենդով հանքանյութը ծածկելու առնչությամբ, նաև ՃՈ աշխատակիցներին կտեղեկացվի տնտեսվարողների կողմից բնապահպանական կանոններին չհետևելու դեպքում համապատասխան միջոցներ ձեռնարկելու առնչությամբ:

Փողոցային առևտրի կանոնակարգման համար ասենք, որ համայնքի ղեկավարը օրերս ընդունել է Արթիկ-Հոռոմ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի վերանորոգման նախագիծը նախագծող կազմակերպության ներկայացուցիչներին, փողոցը վերանորոգվելու է, հետևաբար՝ զգուշացվել է առևտուր կազմակերպողներին՝ վաղվանից ևեթ դադարեցնել փողոցային առևտուրը, այս գործողությունների կազմակերպման համար ներգրավված են Արթիկի համայնքապետարանի համապատասխան բաժինը, ՀՀ Ոստիկանության համապատասխան բաժնի աշխատակիցները: Մեր կողմից ձևավորած հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կկիրառի նաև վարչական տուգանքներ:

- Համայնքի ավագանու անդամ Ա. Աստոյանը հարցրեց, գործարար միջավայի բարելավման համար համապատասխան միջավայրի ստեղծումը ի՞նչ է ենթադրում:

Պատասխանող Ա. Հարությունյանն ասաց, որ վերոնշյալ պատասխանը ենթադրում է ներդրողների ներգրավում, բիզնեսի հիմնման համար համապատասխան օժանդակության տրամադրում, գործունեություն ծավալելու համար տարածքների տրամադրում: Համայնքի տարածքում ունենք մեծ գործարաններ, սակայն տարիներ շարունակ այդ շենքերը պարապուրդի են մատնված եղել, մենք այս հնարավորությունը պետք է օգտագործենք և ներդրողներին մատնանշենք այս հնարավորության մասին, տրամադրենք այդ տարածքները՝ գործունեությունը համայնքում կազմակերպելու համար:

- Համայնքի ավագանու անդամ Ա. Տոնոյանն առաջարկեց քար արդյունահանող ընկերությունների հարկերի վճարման մոտեցումներում օրենսդրորական փոփոխություններ կատարել, ճիշտ չէ, երբ քարն արդյունահանում է տնտեսվարողը և շահույթ ստանում, իսկ համայնքի բնակիչը շնչում է փոշին, այդ եկամտից ստանալով չնչին գումարներ: Բացի այդ առաջարկում ենք ստեղծել այլընտրանքային ճանապարհ, որ բեռնատար մեքենաները համայնքի կենտրոնական փողոցնելով չերթևեկեն:

Համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանը պատասխանեց, որ առաջին հարցով զբաղվում է ՀՀ կառավարության կողմից լիազոր պետական կառավարման մարմինը,

համայնքապետարանը հանքերի գործունեության վերահսկողության ոլորտում առանձնակի լիազորություններ չունեն, լիազորությունները սահմանափակվում են միայն հանքի տարածքները վարձակալությամբ տրամադրելու և ՇՄԱԿ փորձաքննության գործընթացում դիտողություններ, առաջարկություններ անելով, նախագծման, լիցենզիայի տրամադրման ժամանակ դրանք հաշվի են առնվում, իսկ օրենսդրական փոփոխություններ հանքարդյունաբերական գործընթացում իրականացնելու իրավասություններ համայնքի ավագանին չունի: Համայնքը չի կարող կառավարությանը ասել, որ բնավճարները պետբյուջե չմտնեն, այլ համայնքային բյուջե: Բնապահպանական վճարներ է վճարում հանքարդյունահանող կազմակերպությունը պետությանը, որից ձևավորվում են այն միջոցները, որոնք ներդրվում են համայնքում ճանապարհաշինարարության, ենթակառուցվածքների վերանորոգման և այլ զարգացման ծրագրերի համար: 200-300 համայնքի բնակիչ օրավարձով կամ ամսական աշխատավարձով աշխատում է հանքերում, մեր համայնքն ունի այս ռեսուրսը, այլ ռեսուրսներ չունենք կամ բացահայտված չեն, ուրեմն մեզ մնում է թույլատրել հանքարդյունահանող կազմակերպություններին օրենքով սահմանված կարգով կազմակերպել քարի արտադրություն և դրանով իսկ ապահովել համայնքի բնակիչների զբաղվածությունը:

- Համայնքի ավագանի Ա. Աստոյանը կարծիք արտահայտեց, որ սոցիալական և տնտեսական հարցերին բավականաչափ անդրադարձ կա, իսկ բնապահպանական կոմպոնենտին քիչ է անդրադարձվել, բնապահպանական հարցերը նուրբ հարցեր են, դրանց պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել, համաձայն եմ, որ հանքարդյունահանողների համար պետք չեն արհեստական դժվարություններ առաջացնել, սակայն հանքերի շրջակայքում, համայնքի մեջ կանաչապատ տարածքների ընդլայնումը մեր առաջնային խնդիրներից պետք է լինի և դրան վերաբերող հարցերը պետք է ընդգրկված լինեն հնգամյա զարգացման ծրագրում: Այս կոմպոնենտի համար համայնքային միջոցներից պետք է հատկացումներ կատարել:

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Ա. Պասկևիչյանը պատասխանեց, որ ԷՅԹԻՓԻ բարեգործական կազմակերպության հետ այժմ

ուսումնասիրվում են համայնքի այն տարածքները, որտեղ հնարավոր է անտառապատ տարածքներ ստեղծել: Ամենափոքր ուսումնասիրված տարածքը 3000 հա է եղել: Ծրագրի մանրամասների վերաբերյալ հետագայում կլինի առանձին անդրադարձ, իսկ համայնքի ճանապարհների եզրերին, հանգստյան գոտիներում սեզոնային ծառատունկներ պարտադիր կերպով կկազմակերպկվեն: Մեծ ծառատունկ է իրականացվում Լեռնակերտում, Սարալանջում, Նահապետավանում, Արթիկում:

Համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանը նշեց, որ եթե կանաչապատ տարածքների ընդլայնումը, անտառաշերտերի ստեղծումը հնարավոր է դոնոր կազմակերպությունների միջոցով կազմակերպել, ապա ինչու համայնքի սուղ միջոցները ներդնել այդ խնդրի լուծման համար: Ավելի իրատեսական պետք է նայել համայնքի առաջ ծառացած բոլոր խնդիրներին: Այսօր համայնքում առկա ամենաառաջնային խնդիրներից են մանկապարտեզների շենքերի նորոգումը, նոր մանկապարտեզների հիմնումը, փողոցների և բակերի բարեկարգումը, տանիքների նորոգումը, լուսավորության ընդլայնումը, հիվանդանոցի նոր շենքի կառուցումը, դպրոցների շենքային պայմանների բարելավումը: Բոլոր ոլորտներում կան մեծ խնդիրներ: Այսօր առաջնայինը համայնքի բնակչի համար ավելի գեղեցիկ, բարեկեցիկ միջավայրի ստեղծումն է, որ նա կապվի իր համայնքին: Մեր նպատակն է Արթիկին քաղաքային տեսք հաղորդել:

- Համայնքի ավագանու անդամ Լ. Հաջաթյանը հարցրեց, արդյոք գյուղատնտեսության զարգացման համար Արթիկի համայնքապետարանը ունի բավարար ռեսուրսներ, համայնքի բնակիչներին գյուղոլորտի ծրագրեր մշակելիս աջակցություն տրամադրելու համար:

Զարգացման ծրագրերի և զբոսաշրջության բաժնի պետ Մ. Մովսիսյանը պատասխանեց, որ այո, իրենց բաժինը, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը կօգնեն համայնքի բնակիչներին այդ հարցում:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանն ասաց, որ համայնքապետարանը անհրաժեշտության դեպքում կկազմակերպի մասնագիտական խորհրդատվություն, արդեն իսկ կա համապատասխան փորձը, օրինակ՝ պարարտանյութով հողը պարարտացնելու ժամանակ բաժնի պետ Ա.

Պասկևիչյանը մասնագետների է հրավիրել՝ հողօգտագործողներին մասնագիտական խորհուրդներ տալու համար:

- Համայնքի բնակիչ Նորիկ Մկրտչյանը հարց բարձրացրեց, արդյոք ամուսնալուծությունների, երեխաների տեսակցության հարցում համայնքապետարանը լիազորություն ունի, նաև գործազրկության հարցերով զբաղվող աշխատողներ կա՞ն:

Համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանը պատասխանեց, որ համայնքապետարանում գործում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, իսկ գործազուրկներին աջակցելու և նրանց զբաղվածությամբ ապահովելու համար Արթիկի համայնքապետարանում աշխատում են երկու սոցաշխատողներ:

- Համայնքի բնակիչ Վալիկո Մարտիրոսյանը հարցրեց, արդյոք Արթիկի Ս. Դավիթ 9 շենքի տանիքը և կոյուղագծերի վերանորոգումը ընդգրկված են այս ծրագրում:

Զարգացման և զբոսաշրջության բաժնի պետ Մ. Մովսիսյանը ասաց, որ 2023 թվականի ծրագրերի մեջ, այո, ներառված է:

Նիստը ավարտվեց համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի խոսքով: Նա շնորհակալություն հայտնեց ծրագիրը կազմող աշխատակիցներից և ներկաներից: Նա ասաց, որ հանրային քննարկումն անցավ ակտիվ քննարկումների մթնոլորտում: Համայնքի զարգացմամբ մտահոգ երիտասարդների կողմից հնչվեցին հետաքրքիր առաջարկներ և բազմաթիվ հարցեր, որոնց համապատասխան ոլորտային պատասխանատուները տվել են սպառիչ և բովանդակալից պատասխաններ: Կարևորում եմ մասնակցային կառավարումը և ակնկալում ձեր ներգրավվածությունը հասարակական գործընթացներում ու կառավարման մեջ: Լիահույս եմ, որ համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև համագործակցության ու փոխազդեցության արդյունքում հնարավոր կլինի լուծել մեր առջև ծառացած խնդիրները և հասնել համընդհանուր բարեկեցության:

Նիստն ավարտվեց ժամը 17:15-ին:

Նիստը վարեց՝

Արթիկ համայնքի ղեկավար _____ Ա. Ոսկանյան

Արձանագրեց՝

Արթիկի համայնքապետարանի

քարտուղարության, անձնակազմի

կառավարման, եղեկատվական տեխնոլոգիաների

բաժնի առաջատար մասնագետ՝ _____ Տ. Չարչյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի հուլիսի 22-ին հանրային քննարկման դրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

22.07.2022 թ. ժամը 15:00-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Ստորագրությունը
	[illegible]	093-62-60-69	
	[illegible]	093-320-324	
	[illegible]	093-308-304	
	[illegible]	041-99-11-00	
	[illegible]	077-455-262	
	[illegible]	098 86 65 87	
	[illegible]	094 84 45 70	
	[illegible]	093.42.36.66.	
	[illegible]	093 60 32 20	
	[illegible]	093 74 72 24	
	[illegible]	094821557	
	[illegible]	094-52-10-03	
	[illegible]	094844-730	
	[illegible]	098 293030	
	[illegible]	093 353638	
	[illegible]	093 135815	
	[illegible]	093208356	
	[illegible]	077761040	
	[illegible]	094 303238	
	[illegible]	094 01 33 00	
	[illegible]	093 20 34 59	
	[illegible]	098-09-12-65	
	[illegible]	094-92-75-69	

	[illegible]	077 95 90-17	[illegible]
	[illegible]	098140166	[illegible]
	[illegible]	093 253246	[illegible]
	[illegible]	093397248	[illegible]
	[illegible]	098546001	[illegible]
	[illegible]	094-45-96-97	[illegible]
	[illegible]	094-14-16-97	[illegible]
	[illegible]	077-04-29-52	[illegible]
	[illegible]	094-15-34-02	[illegible]
	[illegible]	095-93-55-55	[illegible]
	[illegible]	098-84-98-39	[illegible]
	[illegible]	094-63-45-94	[illegible]
	[illegible]	094-23-50-80	[illegible]
	[illegible]	093.94.99.82.	[illegible]
	[illegible]	094-010-666	[illegible]
	[illegible]	077-770-775	[illegible]
	[illegible]	094-405-455	[illegible]

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի հուլիսի 22-ին հանրային քննարկման դրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը/ Ֆիզիկական/իրավաբանական անձի անունը, ազգանունը,	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1.	Հառրճ գյուղի վարչական ղեկավար Ռ. Նազարեթյան	տարածաշրջանը սպորտի, մասնավորապես վոլեյբոլի, բասկետբոլի, ծանրամարտի ուժեղ թիմեր է ունեցել, նրանք հանդես են եկել հանրապետական առաջնություններում և գրանցել բարձր ցուցանիշներ, հնգամյա ծրագրում սպորտի զարգացման համար որևէ բան գրված չէ	Չի ընդունվել	Գտնում ենք, որ ըստ ոլորտների՝ աղյուսակներում մասնավորեցված էն նաև սպորտի ոլորտի համար ծրագրերը և հատկացվելիք ֆինանսական միջոցներ, սպորտի ոլորտին 50 մլն. ՀՀ դրամ է նախատեսված

2.	Համայնքի ավագանու անդամ Լ. Հաջաթյան	գյուղմթերք վաճառելու համար նախատեսված տարածքից վաճառողները դուրս են գալիս և իրենց առևտուրը կազմակերպում մայթերի վրա՝ անհարմարություններ պատճառելով համայնքի բնակիչներին: Այս կապակցությամբ անհրաժեշտ է միջոցառումներ կազմակերպել փողոցային առևտրի դադարեցման համար:	Ընդունվել է	Փողոցային առևտրի կանոնակարգման համար համայնքի ղեկավարը օրերս ընդունել է Արթիկ-Հոռոմ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոճանապարհի վերանորոգման նախագիծը նախագծող կազմակերպության ներկայացուցիչներին, փողոցը վերանորոգվելու է, հետևաբար՝ զգուշացվել է առևտուր կազմակերպողներին՝ վաղվանից ևեթ դադարեցնել փողոցային առևտուրը, այս գործողությունների կազմակերպման համար ներգրավված են Արթիկի համայնապետարանի համապատասխան բաժինը, ՀՀ Ոստիկանության համապատասխան բաժնի աշխատակիցները: Մեր կողմից ձևավորած հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում կկիրառի նաև վարչական տուգանքներ:
3.	Համայնքի ավագանի Ա. Տոնոյան	առաջարկեց քար արդյունահանող ընկերությունների հարկերի վճարման մոտեցումներում օրենսդրորական փոփոխություններ կատարել, ճիշտ չէ, երբ քարն արդյունահանում է տնտեսվարողը և շիույթ ստանում, իսկ համայնքի բնակիչը շնչում է փոշին, այդ եկամտից ստանալով չնչին գումարներ: առաջարկեց ստեղծել այլընտրանքային	Չի ընդունվել	ՀՀ կառավարության կողմից լիազոր պետական կառավարման մարմինը, համայնքապետարանը հանքերի գործունեության վերահսկողության ոլորտում առանձնակի լիազորություններ չմտնեն, լիազորությունները սահմանափակվում են միայն հանքի տարածքները վարձակալությամբ տրամադրելու և ՇՄԱԿ փորձաքննության գործընթացում դիտողություններ, առաջարկություններ անելով, նախագծման, լիցենզիայի տրամադրման ժամանակ դրանք հաշվի են առնվում, իսկ օրենսդրական փոփոխություններ հանքարդյունաբերական

		ճանապարհ, որ բեռնատար մեքենաները համայնքի կենտրոնական փողոցնելով չերթևեկեն:		գործընթացում իրականացնելու իրավասություններ համայնքի ավագանին չունի: Համայնքը չի կարող կառավարությանը ասել, որ բնավճարները պետբյուջե չմտնի, այլ համայնքային բյուջե: Բնապահպանական վճարներ է վճարում հանքարդյունահանող կազմակերպությունը պետությանը, որից ձևավորվում են այն միջոցները, որոնք ներդրվում են համայնքում ճանապարհաշինության, ենթակառուցվածքների վերանորոգման և այլ զարգացման ծրագրերի համար:
	Համայնքի ավագանի Ա. Աստոյան	սոցիալական և տնտեսական հարցերին բավականաչափ անդրադարձ կա, իսկ բնապահպանական կոմպոնենտին քիչ է անդրադարձվել, բնապահպանական հարցերը նուրբ հարցեր են, դրանց պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել	Ընդունվել է մասնակի	ԷՅԹԻՓԻ բարեգործական կազմակերպության հետ այժմ ուսումնասիրվում են համայնքի այն տարածքները, որտեղ հնարավոր է անտառապատ տարածքներ ստեղծել: Ամենափոքր ուսումնասիրված տարածքը 3000 հա տարածքն է եղել, մեծ ծառատունկ է իրականացվում Լեռնակերտում, Սարալանջում, Նահապետավանում Արթիկում, համայնքի ճանապարհների եզրերին, հանգստյան գոտիներում սեզոնային ծառատունկներ պարտադիր կերպով կկազմակերպվեն
5.	Համայնքի բնակիչ Վալիկո Մարտիրոսյան	Արթիկի Ս. Դավիթ 9 շենքի տանիքը և կոյուղագծերի վերանորոգումը ընդգրկված են այս ծրագրում:	Ընդունվել է	2023 թվականի ծրագրերի մեջ, այո, ներառված է: